

ԿԾՈՒՀ ԱՇԽԱՌԻՅԴ  
ԿԾՈՒՀ ԱՐՄԵՆ

ԺՈՂՈՎՐԴԻ  
ԸՆՏՏՐՅԱԼՆԵՐԸ

ՍՏԱԼԻՆ  
ՄՈԼՈՏՈՎ  
ՄԻԿԱՅՈՒՆ

ՀԵՏՏԱԾ

891.99-192  
4-63

10-14

1.2

891.99-192

4 - 63

ԵՐ.

ԱՇՈՒՆԴ, ԱՇԽԱԹՆԵԺ  
Ա. Ճ Ո Ւ Դ, Ս. Ր Ս Ե Ն

## ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ

Կ ա զ մ ե ց յ ե զ ի ս բ ա զ ր ե ց  
Հ ո վ ի ն ա ս ե լ ի ր ք ա ն



Պ Ե Տ Հ Ա Ր Ա Տ

1 9 3 8


Ծ Ե Ք Ե Ա Ա Ն

13 FEB 2013

TL. P98



3650  
38



Ա Շ Ո Ւ Դ Ա Ս Շ Խ Ո Ւ Յ Ժ

## Ս Տ Ա Լ Ի Ն Ց Ա Ն Գ Ա Ր Ո Ւ Ն

Գևորգական Խորհրդի ընտրությունների առրիվ (դաստան)

Ստալինյան արևմերով հայ աշխարհի այս գարուն  
ժողովրդին բույր է սփռում ծաղիկներով զարդարում։  
Ազգերի հետ յեղայրության, խաղաղության դրոշի տակ—  
Ազատ, ուրախ կյանք են կերտում ամեն մի գյուղ, ամեն տուն։

Հայր Ստալին, մեր աշխարհը քո անունովն է յերդվում,  
Հին փշերով խոցլած սրտեր նոր վարդեր են կանաչում։  
Քեզ վերֆերի սպեղանի, ցավի դեղ են հանաչում  
Ու քո մեջ է հպարտ ապրում ժողովուրդը մեր բեղուն։

Մեր աշխարհում հարուստների պարտքն ու մուրհակն ել չկա',  
Բեկի, քյոլսվի ու դաշնակի ջարդ ու մտրակն ել չկա',  
Ժողովրդի հողը, ջուրը, հացը խլողն ել չկա',  
Հայաստանը միշտ ժեզ հետ է, դու մեր մայիս, մեր զարուն։

Արճաշաղախ հայ լեռները այսոր գուգված ծաղկանց մեջ—  
Թույն ու տոքի ժանսից փրկված բույր են սփռում  
Մարդկանց մեջ։  
Մեր այս ազատ, վերածնված ժողովրդի սրտի մեջ  
Քանի գնում խորանում է մեր գարունը վառվուն։



Դրա համար ժողովուրդը պղբյուրի պես հորդառատ՝  
Սարից, ձորից, կա ու դաշտից ֆեզ է յերգում վեհ, հպարտ՝  
Հանդ, գործարան, սովորող, կոլխոզ քո մարդիկդ հարազատ՝  
Քեզանով են ծլում, ծաղկում, շնչում, ապրում հաստատուն:

Արարատյան փարքամ դաշտը վորպես կյանքի նոր պարտեգ  
Կապուտաչյա Սելվանի ենտ նոր փեղքը են կապում ֆեզ,  
Մեր լոռին ու Զանգեզուրը այսոր բացված վարդի պես  
Քեզ են յերգում, կյանքի արև, մեր առաջնարդ, մեր գարուն:

Հայր Ստալին, քո որենինով այս գարնանը մեր աշխարհ  
Ընտրում ե իր զավակներից իշխանություն մի արդար,  
Ու Գերագույն մեր Խորհրդի դրոշակը դարե-դար  
Քո անվան ենտ պիտի քայլե մեր աշխարհում մնայուն:

Ու Գերագույն Խորհուրդների ընտրությունը մեր յերկրում  
Կյանքի գարուն, մտքի արև, սրտի սեր ե մեզ բերում,  
Ամեն կողմից հույս ու լույսի առվակներ են դողանջում  
Խորհրդային առաջնորդի մտքից, սրտից կարկաչուն:

Յերք նայում ենք մեր գծից դուրս, դարձյալ քունոս  
Բենց ու դավ»

Ներոնների ժառանգներն են այնտեղ ցանում սով ու մահ,  
Դարձյալ արյուն ու կոտորած, մայր ու մանկան վիշտ ու ցավ  
Ցաշիստական գաղանների ժանիքներից որն ի բուն:


Կյանքի ախտը, նենգ փաշխատը, մարդ գաղանը գաղազած,  
Գերման, իտալ ժողովրդի հորդ արյունով հարքեցած,  
Բուս և պահում վոտքը դնել մեր աշխարհը այս ծաղկած,  
Բայց կկտրենք մենք այդ վոտքը քո հուր բրով դյուցագուն:

Անհաղթ ուժ և ժողովուրդը ստալինյան աշխարհի,  
Ալագյազը քաջ յեղբայրն ե կազբեկ, Ելքրուս սարերի,  
Վոլգան, Դոնը և Ամուրը մեր գետերն են հայրենի,  
Սիրում ենք մեր հայրենիքը վոնց Ստալինն իմաստուն:

Հայրենիքը կյանքի գարնան քո լույսերով գեղեցիկ  
Շենանում ե, դրախտ դառնում հազար մրգով անուշիկ,  
Պայծառ լույսեր, նոր ջրանցքներ, գործ, աշխատանք յերջամիկ.  
Պայծառության խինդ են բերում մեր սրտին ու մեր հոգուն:

Խորհրդային բազմալեզու հզոր ազգը սրտագին  
Քեզ ե յերգում, ֆեզ ե գովում, մեր ապակեն Ստալին,  
Թւր անցել եմ՝ մեկ սիրտ դարձած բերաններից զերմագին  
Մադրանիների ճայն եմ լսել կյանքիդ համար քո փայլուն:

Յես, Աշխույժս, մի հայ աշուղ, հայ աշխարհի սրտերից  
Խաղաղության սերն եմ յերգում յելնելով շատ փորձերից,  
Բազմանդամ մեր ընտանիքից ու յերջանիկ ժողովրդից  
Վողջույնի զինջ յերգ եմ ձռնում, ֆեզ, վրկարար, իմաստուն:



## Ը Ն Կ Ե Ր Մ Ո Լ Ո Տ Ո Վ

Հին գվարդիայի Կայուն անդամ,  
Պատովական ընկեր Մոլոտով,  
Աշխատանքներում մշտական  
Ժրաշան ընկեր Մոլոտով:

Շատ նեղություններ քաշեցիր,  
Բանտերում կյանքդ մաշեցիր,  
Ու անվիատ աշխատեցիր  
Մշտական ընկեր Մոլոտով:

Դու յես մեր Սավետի զարդը,  
Ինչպես գարնան անուշ վարդը,  
Ստալինի մոտիկ մարդը,  
Անքածան ընկեր Մոլոտով:

Արսեն կտամ գռվասանք,  
Ու կյանդիրեմ ժեզ յերկար կյանք.  
Աշխատողներ շատ ունենանք  
Քեզ նման, ընկեր Մոլոտով:

## Բ Ն Կ Ե Ր Մ Ո Լ Ո Տ Ո Վ

Հայրենիքն իմ ունի անհուն կապույտ յերկինք ու վեհ լեռներ,  
Զբեր ունի նա վարարուն, դաշտ ու հովիտ արեգնահեր:

Յեկ հայրենի այդ յերկնի տակ, այդ լեռներում հպարտ ու սեզ  
իմ յերջանիկ ժողովրդի կյանին ե քննում, վորպես համերգ:

Սիրում ենք մենք մեր հողը մայր, մեր լեռնաշխարհը յերփներանգ,  
Մեր սրտերում հավերժաբար սերն այդ յեղել ե կենունակ:

Կովի պահին յեղել ե նա մեզ համար վեհ մի զորավիգ  
Ու դարձել աշխարհը մեր այստան չքնաղ ու անառիկ:

Սիրում ենք մենք մեր հողը մայր, բայց այդ սիրուց  
մեծ ու անհուն:

Մենք սիրում ենք ու փայփայում Ստալինին մեր մեծանուն:

Կա յե մեզ միշտ վոգեշնչում և դու՝ նրա ընկերն արի,  
Դու, քանիզագին մեր Մոլոտով, ուրախություն մեր աշխարհի:

Ու յերք կյանեքում ամեն անզամ մենք մի ամրոց ենք նվաճել,  
Մեր սրտերում ազատակամ ձեր պայծառ գովքն ե շառաչել:

Չեզ ենք հիշել կովի պահին ու դրանով առել վոզի,  
Չեզ ենք հիշել, յերք հաղթելով հավաքվել ենք խրախնանքի:

Այժմ ել ահա. յերք հայրը մեր ու դուք նրա ընկերը սեզ  
հոսք եք տուել, վոր մեր անզին պատվիրակները կլինեք:

Այդ ձեր տված պատվի համար, սիրո համար այդ անքափի,  
Աննախընքաց յերջանկության տաղն և յերգում ամեն մի սիրու:


Ամեն մի սիրո հիմա անզուսպ հույզերի ծով և շառաչուն  
Ու ձեր գովքը Արարատի կատարներից բարձր և քոչում:

Չեզ են հիմա փառարանում սրինգները մեր քաղցրախոս,  
Ծաղիկները մեր յերփներանգ, ջրվեժները արագահոս,

Մանուկները մեր ծիծաղուն, վոր Մայիսի քոչչանքն ունեն  
Յեկ աղջիկները մրահոն, պատանիները գեղադեմ:

Ու ավելի ջերմ և նայում հիմա չքնաղ արևը մեր,  
Ավելի հորդ են կանաչում հովիտները արեգնահեր:

Ու չի քոշնի գարունը այդ, այդ արևը չի խավարի  
Յերք դուք եք մեր ժողովրդի յերջանկության պաշտպանն արի::



Ը Ն Կ Ե Ր Մ Ի Կ Ո Յ Ա Ն

Գեղածիծաղ սիրուն կոռու վառ աստղիկ,  
Ժողովրդի մեծ հոգատար, Միկոյան.  
Մարքսի ուսմունք դարձավ մոքիդ բանալին,  
Վորով դեպի լույսը բռար, Միկոյան:

Դպրոցական նստարանից անվեհեր  
Պայքարեցիր ցարիզմի դեմ զոր զիշեր.  
Ազատության ջերմ սիրահար, քաջ ընկեր,  
Կարմիր յերկրի ազնիվ գործիչ, Միկոյան:

Ժողովրդի տառապանքով դու զինված՝  
Քաջ ես կովել հանուն յերկրի փրկության.  
Բայց չես պարտվել կամքով պողպատի նման,  
Միշտ տանելով անդուլ պայքար, Միկոյան:

Սովորեցիր պատգամները լենինյան,  
Մեծ իմաստը, միտքը մարդկանց փրկության.  
Վեհ փափազով գործի անցար անսասան,  
Հանճարների ջերմ բարեկամ, Միկոյան:



Քըսանըվեց ընկերներդ անմուրազ  
Լիրք բորենուց շիրիմ իջան վաղահաս,  
Սակայն նրանց աստղի շողը անպակաս  
Մնալու յե լույսի պես վառ, Միկոյան:

Հետեվելով մեծ կորայի ընթացքին—  
Ինչպես վառ աստղերը մայր արեգակին՝  
Այսոր մեծ պարծանի ես Կարմիր աշխարհին,  
Մեր սիրելի, մեր վառ աստղ, Միկոյան:

Չսրսեցիր ամրոց քերդից ցարական,  
Վորպես հերոս առաջ անցար մշտական.  
Մեծ հանճարի դու վառ ձաղիկ պատվական,  
Նրա գործին մոտ զինակից, Միկոյան:

Վորքան փորձերի մեջ ընկար-յելար դու,  
Չը պարտվեցիր, անհաղթ պայքար տարար դու,  
Մինչ յերազած նպատակիդ հասար դու,  
Գործիդ արժան փառք ստացար, Միկոյան:

Աշխատեցիր մեծ գործի մեջ միշտ մաքուր,  
Մինչ վոր հասար վառ իղձերիդ ընդհանուր,—  
Նախ և առաջ դարձար սննդի աղբյուր,  
Ժողովրդի մատակարար, Միկոյան:

Դու լենինյան խորաքափանց աշակերտ,  
Ստալինյան գործի հմուտ մասնագես,  
Մեկ սիրտ դարձած ընկեր Մոլոտովի հետ,  
Բախտ եք կոռում միշտ մեզ համար, Միկոյան:

Կոմունիզմի գործին ազնիվ բարեկամ,  
Ճիշտ կատարող լենինի ամեն մի պատգամ,  
Քաղբյուրոյի աշալուրջ գաղտնազետ անդամ,  
Զարիք հայտնաբերող, նարտար Միկոյան:

Վոտքդ Հայաստանի հողին յերք դրվեց,—  
Չքացավ քշնամին, անդունդ գլորվեց,  
Յերկիրը դիվերսանտ տարրերից փրկվեց  
Շնորհիվ վեհ խելքիդ, ազնիվ Միկոյան:

Մով գործերիդ վորն ասեմ, մեծ ընկեր,  
Մեր ներկա որերի բարի ոգտարեր,  
Կհավատամ՝ մեր յերջանիկ սերունդներ  
Ճիշելու յեն ֆեզ ջերմ սիրով, Միկոյան:

Ժողովրդի սրտին մոտիկ ես ու վեհ,  
Կյանիքի գարնան բույր ու ծաղիկ ես ու վեհ,  
Ստալինյան դարում վառ աստղ ես ու վեհ,  
Բոլշևիկյան փայլուն գոհար, Միկոյան:

Կարմիր Հոկտեմբերյան մարտիկ աննկուն,  
Կոմունիզմի սիրով կովող անդադրուն,  
Կիուսամ՝ գործերդ ինչպես նոր գարուն  
Անուշ բույրեր սիրուն աշխարհ, Միկոյան:

Կեցցեն ընկերներդ վողջ յերկրի համար,  
Կեցցեք հայր Ստալին աշխարհի համար,  
Կեցցեն քո գործերը դարերի համար,  
Աշխույժ յերգչիս միտք անսպառ, Միկոյան:

023  
Տեխ. Խմբագիր՝ Ստ. Ալբունյան  
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլանվիսի լիազոր՝ Ա.—3098. Հրատ. № 4656  
Պատվեր 506. Տիրաժ 10.000  
Թուղթ 62×94. Տպագր. 1 մամ.  
Հանձնված և տպագրության 28 մայիսի 1938 թ.  
Ստորագրված և տպագրության 31 մայիսի 1938 թ.  
Գետհրատի տպարան, Յերևան, Լենինի 65



ԳԻՒԸ 40 ԿՈՊ.

72.748

ԱՇՍՎՐ—ԱՇԽԱՋ  
ԱՇՍՎՐ—ԱՐՍԵՆ

**Избранники народа**

Гиз Арм. ССР. Ереван 1938 г.